ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆԸ

ԳԵՎՈՐԳՅԱՆ Թ. Հ.

Մեծատաղանդ արտիստ Մհեր Մկրտչյանը հայտնվեց հայ թատերական արվեստում՝ արժանանալով ժողովրդական ինքնաբուխ սիրո:

Դեռևս մանկուց են դրսևորվել նրա բազմաթիվ շնորհները. դպրոցին զուգընթաց սովորել է Մերկուրովի անվան նկարչական դպրոցում (հայրը՝ Մուշեղը, երազում էր, որ որդին նկարիչ դառնա), օժտված անսովոր, բացառիկ երաժշտականությամբ՝ նվագել է կլարնետ, երգել է գուսանական և ժողովրդական երգեր, բանաստեղծություններ է գրել, Տեքստիլ կոմբինատի թատերական ինքնագործ խմբի ներկայացումներին խաղացել է փոքր ու մեծ բազմաթիվ դերեր, Վարդուհի Վարդերեսյանի հետ ուսանել է Գյումրիի թատրոնի ստուդիայում՝ դառնալով թատրոնի երիտասարդ դերասանների փայլուն հերթափոխը:

Ինքն իր մասին ասել է. «Լենինականի Տեքստիլի ակումբը համարում եմ պատերազմական տարիների իմ խանձարուրը, Լենինականի թատրոնը՝ իմ ոսկե օրոցքը, Գ. Սունդուկյանի թատրոնը կարելի է համարել ինստիտուտի ուսումնառություն, այն ամենը, թե ինչ եմ սովորել...»[1]: Ապրել է «Ծանիր զքեզ», «Սովորի՛ր, սովո-րի՛ր, սովորի՛ր...» կարգախոսներով:

«Հայ թատրոնի առեղծվածներից մեկը...Զարմանահրաշ արտիստ: Եկավ աշխարհը ավելի բարի դարձնելու... եկավ ծիծաղով... դարդը թաքցրած մեզանից, ինքն իրենից:

Ապրեց ու արարեց ազատ, անկախ, շռայլ: Մեծ... մեծ, ինչպես իրեն ծնող հողը՝ անզուգական Գյումրին: Նա այն գյումրեցին էր, որ իր մեջ պարփակեց Շերամի վառվող ջիգյարը, Իսահակյանի պոեզիայի խորությունը, Շիրազի ժայթքող սիրտը, Մինասի խիտ ու անսպասելի գույները, Արփաչայի հավերժությունը:

Ինչ բազում ու բազմաթիվ դերեր, ինչ դերակատարումներ: Հա-մաժողովրդական, խելակորույս սեր բեմում, կյանքում: Հումորի շատրվան, հմայքի ծով»[2], - այսպես է բնութագրել մեծ արտիստին անվանի ռեժիսոր, թատերական-հասարակական գործիչ Երվանդ Ղազանչյանը:

Մհերը ծնվել է 1930 թ. հուլիսի 4-ին, նրան անվանել են Ֆրունզիկ: «Մեր ընտանիքում տիրում էր ջերմությունը, այն գալիս էր հորս ու մորս կենսագրությունից, մեր ծանր մանկությունից: Մենք համախմբվել էինք՝ երկու քույր, երկու եղբայր: Ոչ մի ուժ չէր կարող մեզ բաժանել: Ընտանիքով ապրում

---

[1] **Երանոսյան Հ.,** *Մհեր Մկրտչյան, Ե., 2013, էջ 42:*

[2] *Նույն տեղում, էջ 98:*

էինք Մուշով, Վանով, Վանա լճով և Արևմտյան Հայաստանով», - պատմում է կինոբեմադրիչ եղբայրը՝ Ալբերտ Մկրտչյանը[3]:

«Երբ առաջին անգամ գնացի Մարտիրոս Սարյանի արվեստանոցը, - հիշում է Մհերը, - Վարպետը ժպտուն-զննող հայացքով նայեց դեմքիս, կոշտ կերպարանքիս ու հարցրեց.

-Ա՛յ տղա, բնիկ որտեղացի՞ ես…

-Դժվարանում եմ ասել, Վարպե՛տ: Հայրս մշեցի է, մայրս՝ վանեցի, ծնվել եմ Գյումրիում, ապրում եմ Երևանում:

- Ուրեմն դու իսկական հայ ես, - եզրակացրեց Վարպետը: Մի երկու անգամ բեմում քեզ տեսել եմ՝ էնտեղ էլ հայ ես, որ կաս… Հա, ա՛յ տղա, անունդ էն չի… Ով է դրել, մշեցի ու վանեցի ծնողնե՞րդ... Չէ, անունդ փոխի՛ր… Մհեր դիր… Բայց Փոքրի պես ժայռում չփակվես, ժողովրդիդ հետ եղիր, նրանով ապրիր, մեծացիր…»[4]: Այսպիսով, Մ. Սարյանը դարձավ նրա նոր կնքահայրը:



Տեսարան Լ. Գայդայի «Կովկասի գերուհին» ֆիլմից

Սեփական թերությունները, ծիծաղելի և մերժելի կողմերը տեսնելը, դրանցից ազատվելու ջանքերը միայն արդարամիտ ու շրջահայաց մարդկանց, ժողովուրդներին է հատուկ, արվեստում՝ ամենամեծերին: Մհերն այդպիսին էր: Նա իր ժողովրդին սովորեցրեց ժպտալ, ծիծաղել, սովորեցրեց խորաթափանց լինել և կյանքի ծանրությունը թեթևացնել հումորով:

---

[3] Նույն տեղում, էջ 103:

[4] Ժողովրդական արտիստը. Մհեր Մկրտչյանը ժամանակակիցների հուշերում, կազմող՝ **Ավագյան Խ., Ե., 2003, էջ 5, Երանոսյան Հ.,** նշվ. աշխ., էջ 20-21:

Դերասան Սոս Սարգսյանը, որ նաև գրչի մարդ էր, հրաշալի է ներկայացրել մեր թատրոնի հյուրախաղերը Բեյրութում. «Թատրոնը մեկնեց արտասահմանյան հյուրախաղերի: Իջանք Բեյրութի օդանավակայան:

Հայերն էին եկել մեզ դիմավորելու: Դեռ ուշքի չէինք եկել, ընկանք նրանց գիրկը: Բեյրութահայերն առաջին անգամն էին տեսնում հայրենիքից եկած այսպիսի խումբ: Ծաղիկների ծով, լացի ու արցունքի ծով: Անհասկանալի է, մարդիկ ծիծաղո՞ւմ են բարձրաձայն, թե՞ հեկեկում, իրար հրելով ձգտում են դեպի մեզ, որ գրկեն, համբուրեն, մի կերպ կպչեն: Տարեց մամիկները, թոռնիկներին ձեռքներին առած, իրար գլխի վրայից պարզում են մեզ:

- Ձեռք տուր, յավրիկս, բռնե, շոյե, Հայրենիքի համն է, Հայրենիքի հոտն է…

Մհերը խաղաց Պաղտասար աղբար, և խմբի ստորակարգումները խախտվեցին, համայնքը ազատ, բնական, առողջ, ամեն մեկիս դրեց իր տեղը ըստ արժանիքի, կոչումներից անկախ: Մհերը միանգամից դարձավ անկառավարելի, անհսկելի, դարձավ բոլորինը: Դաշնակցականները, որ զուսպ էին և զգույշ, չլինի թե մեզ հետ շփվելով մեզ վնաս հասցնեն, Մհերի հարցում չդիմացան, կորցրին իրենց զգուշավորությունը: Նրա Պաղտիկը դարձավ հյուրախաղերի զարդը: Վաթսունվեցի հյուրախաղերը Բեյրութում Մհեր Մկրտչյանը դարձրեց իրենը, և իր հռչակով անմրցելի էր: Թերևս մեկ էլ Աբաջյանն էր, որ համայնքի համար բացում էր Պարույր Սևակի աշխարհը շռայլ ու շռայլ…

Ազգային հպարտություն էր Մհերը Բեյրութում: Օտարության մեջ, Հայրենիքից կտրված, ծարավ մարդիկ նրա միջոցով վերագտնում էին իրենց, գիտակցում, որ կան, որ ժողովուրդ են, երկիր ունեն, տաղանդներ ունեն, Մհեր Մկրտչյան ունեն»[5]*:*

Պատանի Մհերին, տեսնելով նրա Քաջ Նազարը, առաջինը ըստ արժանվույն գնահատել է անվանի դերասան Ժան Էլոյանը: Գևորգ Աբաջյանն իր հուշերում գրում է. «1948 թ. մարտյան մի պայծառ առավոտ, դերասան Ժան Էլոյանի առաջնորդությամբ Գյումրիի թատրոնի դռնից ներս մտավ ցնցոտիների մեջ պարուրված, ոտնամանների ներբանները պղնձալարով կապած տասնութամյա մի պատանի՝ Ֆրունզիկ անունով, որի նիհարավուն դեմքի վրա տիրականորեն բազմած էր տոհմական փարթամ քիթը: Նրան տեսնողն առաջին հայացքից լցվում էր կարեկցանքով, բայց հաջորդ վայրկյանին չէր կարողանում իր հայացքը կտրել տղայի նշաձև խոշոր աչքերից, որոնք լցված էին ծխացող թախիծով՝ վկայությունը երեխայի ապրած ծանր օրերի»[6]*:*

1950 թ. Մհերն արդեն թատրոնում էր, և սկսնակ երիտասարդի առաջին մեծ հաղթանակը Մ. Գորկու «Թշնամիներ պիեսում 80-ամյա պաշտոնաթող սպասյակի դերակատարումն էր, որ ապշեցրեց թատրոնի ողջ կոլեկտիվին: Տարաբնույթ մեծ ու փոքր դերերը՝ թվով 35, հաջորդեցին իրար, և պարզ դարձավ, որ թատրոն է եկել արտիստական անսովոր արժանիքների տեր

---

[5] *Ժողովրդական արտիստը, էջ 30:*

[6] **Երանոսյան Հ.,** *նշվ.աշխ., էջ 6:*

տաղանդավոր մի դերասան: Այնուհետև՝ Ալ. Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայի ամենադժվարաքայլ Սաղաթելը, Գոգոլի «Վերաքննիչը», Լ. Քալանթարի բեմադրությունը Խլեստակովի դերում, և Մհերը հայտնը-վեց Թատերական ինստիտուտում՝ հայ մեծ դերասան Վ. Վաղարշյանի արվեստանոցում այն էլ միանգամից երկրորդ կուրսում: Ինստիտուտ դեռ չէր ավարտել, երբ՝ 1954թ., Ամեմյանը հրավիրեց Սունդուկյանի անվան թատրոն Շիրվանզադեի «Նամուս» դրամայում կուժ ու կուլա վաճառող, բրուտագործ Հայրապետին մարմնավորելու: Թատրոնի երիտասարդների ուժերով և նոր մոտեցմամբ լուծվեց Մայր թատրոնի սերնդափոխության հարցը՝ Մհերին պարգևելով մի նոր հաղթանակ: Հայրապետով սկսվում է Մհերի հաղթարշավը Մայր թատրոնում:

«Նույն հարկի տակ» ներկայացման մեջ իր փոքրիկ ու համր դերի համար նրան շնորհվում է հատուկ մրցանակ, որպես լավագույն դերակատարներից մեկին: Ստանում է գլխավոր դեր՝ Եզոպոս... Վ. Վաղարշյանի հետ դառնալով թատրոնի մեծանուն դերասաններից մեկը: Նա թատրոն էր եկել հաղթանակների համար: Քառորդ դար (1954-1978թթ.) ստեղծագործեց Սունդուկյանի անվան թատրոնում, անձնավորեց 25 կերպար՝ դերասանական նույն քուրայում թրծված տարբեր դրսևորումներով. Գարեգին՝ Տեր-Գրիգորյանի «Գարնան անձրև»-ում, Կարճիկյան՝ Չարենցի «Դեպի ապագան» ստեղծագործության մեջ, Կոսակ՝ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է», Կադմոս՝ Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ», Կակուլի և Զամբախով՝ Սունդուկյանի «Պեպո» և «Խաթաբալա» պիեսներում, Միրանոն դը Բերժրակ Ռոստանի համանուն թատերգությունում, Շմագա՝ Օստրովսկու «Անմեղ մեղավորներ»-ում, Գոդուն՝ Լավրենյովի «Բեկում»-ում, որոնք դիտում էին ոչ միայն հանդիսականները դահլիճից, այլև խաղընկերները՝ կուլիսներից:

Նրա արվեստի արմատները գնում էին հայ թատրոնի պատմության խորքերը, նա շատ խորն էր զգում մարդու բնավորությունը: Իր շուրջն էր սփռում հայ հանճարի անսպառ կուտակումներից իրեն ճակատագրով հասած մասունքները: Այնուամենայնիվ, ամենաապշեցուցիչ անակնկալը դեռ առջևում էր: Դա մասնագիտությամբ բժիշկ, կոչումով թատերագիր Ժորա Հարությունյանի հայտնությունն էր Մայր թատրոնում՝ «Սրտի արատ» պիեսով: Ամեմյանն ասես հենց դրան էր սպասում... Հանրապետության Սարահարթ գյուղում որոշել են լուծել խոպան հողերի մշակման խնդիրը, որն ունի կողմնակիցներ և հակառակորդներ: Երկրորդական դերով Գվիդոնը՝ Մհերի կատարմամբ, դարձավ ներկայացման հերոս: Ժ. Հարությունյանը տիրապետում էր ժողովրդական հումորին, ուներ կերպարի սուր զգացողություն, երկխոսություն կառուցելու մեծ ձիրք, դիտողականություն և համարձակ էր: Մհերը ինքն ընտրեց կերպարի հագուստները՝ գլխարկը, կոշիկները, բաճկոնը և տաբատը: Մեծանուն Ամեմյանը համաձայնվեց այդ զգեստավորմամբ բեմադրել պիեսը: Երբ բեմահարթակ էին բարձրանում Գվիդոն-Մհերը և Թաթիկ Սարյան-Փորսուղյանը, ներկայացումը վերածվում էր թատերական հրավառության: Ավելի քան տասը տարի «Բուդյոննու ձին նստած Գվիդոն-Մհերի զավեշտալի խոսքն ու գրոտեսկային խաղն էին

թևածում թատրոնում: Այդ տասը տարիների ամենօրյա հանդիսատես Սոս Սարգսյանի պատմածով՝ անհնար է աշխարհի որևէ թատրոնում պատկերացնել արվեստի հորդացող այդպիսի լավա, այդպիսի հրճվանք, այդքան ծափ, այդքան երջանիկ հանդիսատես... Հումորի հեղեղը թափվում էր բեմից, լցվում էր դահլիճ, բարձրանում մինչև առաստաղ, տարածվում՝ կլանում ողջ թատրոնը, թատրոնի մարդկանց, հսկիչներից մինչև հրշեջները: Թվում էր՝ այդ օրը թատրոնի պատերն էլ էին քրքջում... Հանդիսատեսը նրա մեջ իր իրձերն էր տեսնում, ահա եկել էր մեկը, որ իր փոխարեն խիզախում է, անհնազանդ է, ըմբոստ, անկառավարելի»[7]:

Տեսարան Ժ. Հարությունյանի «Ղազարը գնում է պատերազմ» ներկայացումից

Թատրոնի տոմսարկղի հերթը հսկայական էր: Մհերը Գվիդոնով բեմ ելավ ավելի քան 500 անգամ, և դերացանկում նրան փոխարինող անուն չհայտնվեց: Գվիդոնի ստեղծագործական փոթորիկները դեռ չէին հանդարտվել, հրապարակ եկավ Ժորա Հարությունյանի «Ղազարը գնում է պատերազմ» կատակերգությունը, որտեղ Մհերը կերպավորեց իր հաջորդ հրաշքը: Կատակերգությունը պատկերում է 1920 թ. Հայաստանը, խորհրդային կարգերի հաստատումը, որը ոտքի էր հանել գրեթե բոլորին: Գլխավոր հերոսը միամիտ գեղջուկ Ղազարն է, որը կտրվել է առօրյա վար ու ցանքից, անասնապահությունից և կամավոր պատերազմ է գնում: Նա նույնիսկ չգիտե,

---

[7] *Ժողովրդական արտիստը, էջ 31:*

թե ինչի համար է այս պատերազմը. հայտնվել է քաղաքական անցուդարձի խաչմերուկում, դարձել դրա ակամա մասնակիցը: Վերջ չկա Ղազարի արկածների շարանին, մինչև այն պահը, երբ Ղազարը ի վերջո հասկանում է, թե իրականում ինչ է կատարվում իր շուրջը:

Երկրպագուները ներկայացման տոմսեր ձեռք բերելու համար գիշերները լուսացնում էին տոմսարկղի մոտ, ցուցակագրվում, որպեսզի առավոտյան կարողանան տոմս գնել: Ղազարը կախարդեց հանդիսատեսին: Բեմադրիչ Հր. Ղափլանյանը գտել էր այն պահը, երբ Ղազար-Մհերը անգուգական վարպետությամբ կատարում է «Որսկան ախպեր»-ը՝ հուզական մեծ լիցք հաղորդելով ներկայացմանը, ամբողջացնելով Ղազարի կերպարը. աջ ու ձախը խառնող գեղջուկը դարձել էր հայրենիքի զինվոր: Ժողովրդական սիրո մի նոր ալիք բարձրացավ արտիստի անվան շուրջ, ամենուրեք Ղազարի թևավոր խոսքերն էին, նրա մասին հիացմունքի արտահայտությունները: Մհերը տարիներ շարունակ այդ դերը խաղաց տարբեր բեմերում: Այն ներկայացման դերացանկում փոխարինող չունեցավ:

«Ես, որպես Մհերի բարեկամն ու հանդիսատեսը, - գրում է Ժորա Հարությունյանը, - միշտ հիացած եմ եղել նրա արտիստական բնատուր անկեղծությամբ, նրա հմայքով, նրա բեմական նիստուկացով, խոսքին ներդաշնակ դեմք ու դիրքով, իր անսպասելի, հանպատրաստից բեմական հնարքներով, հենց որով էլ ասես բռնում, իրենով էր անում հանդիսատեսին իր ողջ էությամբ...Մհերը մեծ հմայքի տեր էր, քաղցրություն, և հմայքը, իմ կարծիքով, գալիս էր նրա ներքին էությունից, քանզի հմայք խաղալը անհնար բան է: Դա կամ կա, կամ չկա: Դա նրա վառ տաղանդի ներքին մի շերտն էր նաև»[8]:

Տիտանական աշխատանք էր կատարում, և ինչպես էր կարողանում հասցնել. արդեն երևում էր նաև կինոէկրանին: Ոչ միայն բեմում ու էկրանին, այլև ասմունքելիս: Ժողովրդական արտիստ Խորեն Աբրահամյանը նրա մասին գրել է. «Մհերի կարողությունների ներկապնակը, շնորհքի ամպլիտուդան շատ մեծ էր՝ ամենազավեշտականից մինչև ամենառողբերգականը: Երբեք հենց այնպես բեմ դուրս չէր գալիս: Եվ վերջում իր թատրոնում բեմադրեց «Հացթուխի կինը» և անձնավորեց հացթուխ Էմբլեի դերը, որն էլ եղավ նրա կարապի երգը: Ֆրունզիկ Մկրտչյանը միշտ կմնա թատրոնում որպես՝ անկրկնելի մի երևույթ»[9]: «Վշտի և ծիծաղի արքան» երբեք չբաժանվեց Ղազարից, իր հիմնադրած «Արտիստականում» առաջինը Ժ. Հարությունյանի «Ղազարը գնում է պատերազմի» նոր բեմադրությունն էր՝ շտապող և միայն արարումների մեջ հանգստացող բեմադրիչի և դերակատարի թագն ու պսակը: 1959 թ. «Հայ-ֆիլմ» կինոստուդիայում նկարահանվեց «01-99» կարճամետրաժ կինոնկարը (Հ. Վարդանյանի և Զ. Տեր-Կարապետյանի սցենարով), և Մհերն էկրանին կերտեց իր անգուգական Գարսևանին: Այնքան մեծ էր այս պարզամիտ ու ծիծաղելի կերպարի

---

[8] *Պատուհան դեպի հավերժություն, կազմող՝* **Հարությունյան Գ.,** *Ե., 2013, էջ 30:*

[9] **Երանոսյան Հ.,** *նշվ. աշխ., էջ 96:*

հաջողությունը, որ մի օր հանրապետության ավտոտեսչությունը Միերին իր մեքենայով հրավիրեց տեսչություն, հանդիսավոր պայմաններում մեքենայից հանեց հին համարը, տեղադրեց նորը՝ «01-99»՝ իրագործելով արտիստին մեծարելու ինքնատիպ մի փորձ:

1964թ. Վ. Աճեմյանը Մայր թատրոնում բեմադրեց Շեքսպիրի «Ռեմեո և Ջուլիետ» ողբերգությունը՝ Միերին ներկայացնելով Մեր-կուցիոյի դերակատարմամբ: Գեղեցիկ ժպիտը անսահման հմայիչ դեմքին, սուրը ձեռքին, ազնվականի շարժուձևով՝ նա ոչ թե պատժել, այլ խրատել էր ուզում Թիբալդին՝ հիասքանչ սուսերամարտով հերոսական շունչ հաղորդելով կերպարին: Անվանի շեքսպիրագետ Լուիզա Սամվելյանը Մերկուցիոյի դերակատարումը որպես բոլոր ժամանակների նորովի դրսևորում որակեց ոչ միայն մեզանում, այլև համաշխարհային առումով:

Անշուշտ, նշանակալի է Մ. Մկրտչյանի ներդրումը կինո-արվեստում: Միերը Չարլի Չապլինի, Ֆերնանդելի, Տոտոյի, Լուի դը Ֆյունեսի մակարդակի կատակերգակ էր: Լեոնիդ Գայդայի ֆիլմում («Կովկասի գերուհին») նրա Ջաբրիելը Վլադիմիր Էտուշի, Յուրի Նիկուլինի, Գեորգի Վիցինի, Եվգենի Մորգունովի կողքին է, Գեորգի Դանելիայի «Միմինոյում»՝ Վախթանգ Կիկաբիձեի: Ոչ միայն փայլել է «Ալի Բաբան և 40 ավազակները» կինոնկարում (ռեժ.՝ Լ. Ֆայզին), այլև մտերմացել Ռաջ Կապուրի հետ:

Ռոլան Բիկովը հիացած էր նրա տխուր ծովահենով: Իսկ Հենրիկ Մայյանի «Երանկյունու», «Մենք ենք, մեր սարերի» Գասպարն ու Իշխանը, «Նահապետի» Ափրոն, Ալբերտ Մկրտչյանի «Մեր մանկության տանգոյի» Ռուբենը, «Հին օրերի երգի» ողբերգական փոստատար Նիկոլը նրան դարձրին հայ մշակույթի գիսաստղը:

Նշենք, որ վերջերս լույս տեսավ արվեստի վաստակավոր գործիչ Հայկազ Երանոսյանի «Միեր Մկրտչյան» աշխատությունը, որն ամբողջացնում է տաղանդավոր դերասանի գործունեության տարեգրությունը՝ առանձին-առանձին, ըստ տարեթվերի և թատրոնների, ինչպես նաև ռադիոբեմադրություններում, կինոյում, հեռուստաֆիլմերում, Արտիստական թատրոնում, Լոս Անջելեսի «Արտավազդ» թատերախմբի հետ, Հեռուստաթատրոնում, սփյուռքահայ թատրոններում (Լիբանան, Կանադա, ԱՄՆ, Ֆրանսիա) նրա կատարած վիթխարի աշխատանքը: Գրքում տեղ են գտել նաև ժամանակակիցների հուշերը, հազվագյուտ լուսանկարներ:

Միեր Մկրտչյանի արվեստը համամարդկային է, հասկանալի և ընդունելի աշխարհի բոլոր ծայրերում:

ЛЕГЕНДАРНЫЙ МГЕР МКРТЧЯН

ГЕВОРГЯН Т. А.

Резюме

Народный артист АрмССР и СССР Мгер Мкртчян оставил яркий след в истории театра и кино. Созданные им сценические образы в пьесах А. Ширванзаде, М. Горького, А. Пароняна, Ж. Арутюняна, В. Шекспира и др. снискали славу, а также любовь благодарных зрителей. Будучи театральным актером, он сыграл множество интересных ролей как в армянских, так и союзных фильмах (“Треугольник”, “Солдат и слон”, “Мужчины”, “Крупный выигрыш”, “Мимино”, “Кавказская пленница”, “Айболит-66” и т.д.). Его жизни и творчеству посвящено множество исследований, в ряду которых особо следует отметить монографию известного театроведа, заслуженного деятеля искусств РА А. Ераносяна “Мгер Мкртчян”.

LEGENDARY MHER MKRTCHYAN

T. GEVORGYAN

Abstract

Mher Mkrtchyan, a national artist of the USSR, made a significant impact on the history of the cinema and theatre. He earned the love and appreciation of the audience through his characters in the plays by Shirvanzadeh, M. Gorky, H. Paronyan, G. Harutyunyan, W. Shakespeare and other outstanding playwrights. He is famous for his roles in Armenian and Soviet films “The Triangle”, “The Soldier and the Elephant”, “The Men”, “The Big Win”, “Mimino”, “The Caucasian Hostage” , “Aybolit-66 ”, and others.

Among the vast research done into the actor’s life and work, one should mention the work by A. Yeranosyan, an eminent theater critic.